

իս է լինում ք. պատրաստական դասատան աշակերտուհիների հետ, յանկարծ մտնումէ նոյն հոգաբարձուն դասատուն և ուսուցչի դասախօսութիւնը ընդհատելով հարցնումէ աշակերտուհիներից մինին մի մանկավարժութեան մէջ անընդունելի խնդիր 200,000 զրելու մասին, որը օրիորդը չէ կարողանում լուծել, եւ այսպիսի պատճառներով ուսումնարանից հեռացնումէ թէ տեսչին և թէ բոլոր ուսուցիչներին, Ազնիւ ընթերցող, մի՞թէ չես զարմանում Թիֆլիսցիների վերայ, որոնք միշտ մատնանիչ են եղել դաւառական Հայի թեթեւ պակասութիւնների վերայ, իսկ իւրեանց մէջ այս և այսպիսի հասարակական կրթարանների և այլ հիմնարկութիւնների թերութեանց վերայ սառն աչքով են նայել միշտ և այդ պատճառաւ դաւառական Հայը աւելի խոհեմ է ազգային գործերի մէջ, քան Թիֆլիսցին. ցաւալի՜ իրողութիւն

Հետեւեալ նամակումս կ'խօսեմ սորա երկրորդ մասի վերայ, որ է Հաւաքարու Ս. Մարիամեան օրիորդական միակ ուսումնարանը նոյն թաղի, որ հիմնած է նոյնպէս Հ. Ստեփանէն 1869 թուին:

Թիֆլիս:

Լ. Ներչեան:

ԴՈՒՔ ԶԷՔ ԿԱՐՕՂ.

Մի՛ խօսէք ինձ բաղդի մասին,
 Ինձ թանկ է իմ ծանրակիր խաչ.
 Դատարկ, անմիտ, սառն ամբոխին
 Ես չեմ սեղմի ինձ մեկնած աջ:
 Ծշմարտութիւն, սէր — գիտեմ ես —
 Արդէն վաղուց այս աշխարհում
 Հալածվումեն միշտ դառնապէս,
 Եւ անարդար վճիռ կապվում:
 Թող ինձ սպառնան հալածանքներ,
 Ծանր զրկանք, կարիք անել, —
 Ես ունիմ այն քաղցրութիւնների,
 Դուք չէք կորօղ երբէք ունել:
 Ազատ հոգումս գործվումեմ
 Չեղ անծանօթ միտք և փափագ,
 Եւ իմ վիճակ փոխելու չեմ
 Խեղճ կեանքիդ հետ աննպատակ:

Իշխան Բագրատունի.